ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան Մոսկովյան 1 հեռ. ֆաքս 56-70-63

« 03 » ապրիլի 2014թ.
N 7/1-2647

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
ք.Վանաձոր, Տ.Մեծի փողոց, 59

«Հայաստանի Հելսինկյան Կոմիտե» ՀԿ
ք.Երևան, Պուշկինի փողոց, 3ա

«Դիլնետ սերվիս» կրթական ՀԿ
ք.Դիլիջան, Մյասնիկյան փողոց, 66շ., 5-րդ հարկ

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ
ք.Երևան, Բաղրամյան պողոտա, 45շ., 14բն.

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ
ք.Երևան, Թումանյան փողոց, 21/1շ., 5բն.

«Տրտու» ՀԿ
ք.Երևան, Շարուրի փողոց, 20-1

«Իրավունքի գերակայություն» ՀԿ
ք.Երևան, Հր.Քոչար փողոց, 16շ., 18բն.

«Ժողովրդավարություն և ընտրական գործընթացներ միջազգային կենտրոն» ՀԿ
ք.Երևան, Ա.Տիգրանյան փողոց, 5-8

«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ
ք.Երևան, Արշակունյանց պողոտա 6

«Բաց հասարակություն հիմնադրամներ-Հայաստան»

ՀՀ գլխավոր դատախազին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, ՀՀ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահին հասցեագրված, 2014թ. ապրիլի 2-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության վարչությունում ստացված Ձեր և մի խումբ ՀՀ քաղաքացիների դիմումի կապակցությամբ հայտնում եմ, որ նույն վարչությունում քննվող թիվ 69110713 քրեական գործով նախաքննությունը կատարվել է ՀՀ քրեական դատավարության 17-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ: Նախաքննության ընթացքում ձեռնարկվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար պարզվել են ինչպես մեղադրյալների մեղա-

վորությունը հիմնավորող, այնպես էլ՝ նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Մեղադրյալներին մեղսագրված հանրորեն վտանգավոր արարքները բխում են քրեական գործով ձեռք բերված փաստական հանգամանքներից, հավաքված բոլոր ապացույցները ձեռք են բերվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածների պահանջների համաձայն՝ ենթարկվել են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրն ստուգելու միջոցով: Յուրաքանչյուր ապացույց գնահատվել է վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն՝ իրենց համակցության՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ինչի արդյունքում էլ հիմնավորվել են մեղադրյալների կողմից իրեն մեղսագրված հանրորեն վտանգավոր արարքների կատարման հանգամանքները, և նրանց առաջադրվել է մեղադրանք:

Ինչ վերաբերում է Վոլոդյա Ավետիսյանին, ապա թիվ 69110713 քրեական գործով նման տվյալներով մեղադրյալ ներգրավված չէ:

ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ
քննության վարչության բաժնի պետ՝ ***Ս.Տոնոյան***

Հեռ.՝ 010-57-11-33